

ՀՏԴ 902.034

ՀՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

DOI 10.54151/27382559-2021.2b-93

**ՍՏՈՐՋՐՅԱ ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆՆ
ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ
Մարտիկյան Ա. Վ.**

Հաշվի առնելով Հայկական լեռնաշխարհի լճերում (Սևանա լճում, Վանա լճում) ջրասույզ հայկական հուշարձանների առկայությունն ու ուսումնասիրման անհրաժեշտությունը, ինչպես նաև ծովերում և օվկիանոսներում հայապատկան նավերի հիշատակումներն ու վերջին տարիների բացահայտումները՝ ներկայացնում ենք աշխարհում մեծ զարգացում ապրող ճյուղի՝ ստորջրյա հնագիտության զարգացման անհրաժեշտությունը Հայաստանի Հանրապետությունում և առաջարկում շոշափել ոլորտի զարգացման խնդիրները:

Բանալի բառեր. ստորջրյա հնագիտություն, ծովագնացություն, ծովային հնագիտություն, Սևանա լիճ, Վանա լիճ, դայվինգ:

Նախաբան: Հայաստանում գրեթե չուսումնասիրված ուղղություն է ստորջրյա հնագիտությունը: Հայաստանի ներկայիս սահմանները հեռու են ծովերից, սակայն հայոց պատմությունը հարուստ է ծովագնացության հիշատակություններով, Հայկական լեռնաշխարհի լճերը՝ ջրասույզ հուշարձաններով, ծովերն ու օվկիանոսները՝ հայապատկան խորտակված նավերով:

Միջնադարյան հայկական սկզբնաղբյուրներից Թովմա Արծրունին և Մովսես Կաղանկատվացին պատմում են Վանա լճի ափամերձ շրջաններում հայկական եկեղեցիների, ամրոցների, խաչքարերի, արհեստական նավահանգստի, նաև բնակավայրերի մասին, որոնք ջրասույզ են եղել ջրի մակարդակի բարձրացման հետևանքով [2, 5]:

Սևանա ու Վանա լճերում կատարած հետախուզական սուզումների ընթացքում տեսագրվել են հայկական մի քանի ջրասույզ հուշարձաններ, ինչն առավել կրնոգծի Հայաստանում ստորջրյա հնագիտության զարգացման կարևորությունը:

Ստորջրջա հնագիտության զարգացման կարևոր խնդիրներից է հայկական ջրասույզ հուշարձանների (այդ թվում նաև խորտակված միջնադարյան նավերի) մասին տեղեկությունների հավաքագրումը, համակարգումը, քարտեզագրումը, ինչպես նաև գիտակրթական հաստատություններում սուզորդական հմտությունների ուսումնցման ու միջազգային չափորոշիչներին համապատասխան վկայագրի տրամադրման ներդրումը:

Ջրասույզ հուշարձանների ուսումնասիրություն: Ստորջրյա հնագիտություն (underwater archaeology), հիդրոհնագիտություն (hidroarchaeology), ծովային հնագիտություն (nautical archaeology), խորջրյա հնագիտություն (marine archaeology կամ maritime archaeology) ոլորտներն սկսեցին մեծ զարգացում ապրել XX դարից, երբ գիտության ու տեխնիկայի առաջընթացը հնարավորություն տվեց ուսումնասիրել լճերի, ծովերի, օվկիանոսների հատակը:

Հայկական միջնադարյան ջրասույզ ժառանգության մասին են հուշում հայկական սկզբնաղբյուրները:

Պատմական հուշարձանների թաքստոց է Վանա լիճը:

Արիստակես Լաստիվերցին հիշատակում է 1054 թ. Ածկեի ծովային բերդի գրավման մասին, ինչի պատերը, մոտակայքում գտնվող աշտարակը, հարակից զարդանախշերով ու հայկական գրերով քարերը 2019թ. տեսագրել ենք լճի հատակին [1, 2]:

Վասպուրականի V գահերեց իշխանի՝ Գագիկ Արծրունու՝ Ոստանավանում կառուցած պարիսպների ու Աղթամար կղզում կառուցած արհեստական նավահանգստի նկարագիրն է տալիս հայ մատենագիրներից Թովմա Արծրունին, ինչը X դարում հազվադեպ երևույթ էր [2]:

Վանա լճի ջրագույզ բնակավայրերին է անդրադարձել հուշարձանագետ Սամվել Կարապետյանն իր «Հայաստանի պատմություն» 36-հատորյա մատենաշարի «Հայոց Ձոր» Ա և «Արծկե» Գ հատորներում [8, 9]:

Վանա լճի ջրասույզ հուշարձաններից ուսումնասիրել ենք մի քանիսը: «Արմդայվինգ» ընկերության սուզորդների հետ սուզումներ ու տեսագրություններ ենք կատարել Արծկեի ծովային բերդի և աշտարակի մոտակայքում: Հուշարձանագետ Սամվել Կարապետյանի օգնությամբ, առկա նյութերն ու պատմիչների վկայությունները հիմք ընդունելով, կազմել ենք պատմական ու մշակութային ջրասույզ ժառանգության քարտեզը՝ հետևյալ հերթականությամբ.



Նկ.1. Վանա լճում ջրասույզ հուշարձանների քարտեզը:

1. Արծկե ծովային բերդի պատեր,
 - 1.1 Աշտարակ, խորությունը 5-20 մետր, քարի վրա փորած խաչ, հայագիր տապանաքար,
2. Կողուց Վանք,
3. Կոճերաց վանք,
4. Արճրա - վանքի ավերակներ, XII դ. խաչքարեր, գերեզմաններ,
5. Արճեշ - (քաղաքը XIX դ. սկզբին է ամայացել),
6. Ուրարտական շրջանի նավահանգիստ (նավահանգիստ լինելը վարկած է),
7. Խառականց - խաչքարեր (XVI դ.),
8. Ոստանավան, Ռշտունյաց գավառ - Գագիկ Արծրունու պալատի պարիսպներ,
9. Աղթամար կղզի - արհեստական նավահանգիստ,
10. Տատվան:

Վանա լճում ջրասույզ հուշարձաններին 2020-ին անդրադարձել ենք «Ստորջրյա հնագիտության պատմությունը և դրա զարգացման անհրաժեշտությունը Հայաստանում» վերնագրով մագիստրոսական աշխատանքում:

Հայկական լեռնաշխարհի մեկ այլ, մեզ հասանելի Սևանի ավազանում, լճի ափամերձ տարածքում ուսումնասիրություններ շատ


են կատարվել, սակայն ստորջրյա ուսումնասիրություններ՝ հազվադեպ, քանի որ Հայաստանը չունի ստորջրյա հնագետներ:

Սևանի ավազանի մասին հիշատակություններ ունի Մանուէլ Գիւմուշխանցին «Պատմութիւն անցից անցելոց Սեւանայ վանուց» գրքում [3]: Մեսրոպը Արքեպիսկոպոս Սմբատեանցն իր «Տեղեկագիր Գեղարքունի Ծովագարդ գաւառի, որ այժմ Նոր-Բայազիտ գաւառ» գրքում հաշվառել է Սևանի ավազանի նյութական և մշակութային ժառանգությունը [2]: Սևանի ավազանի Կիկլոսյան ամրոցներն է ուսումնասիրել Գ. Միքայելյանը [6]:

Անցած դարակեսին լճի մակարդակն իջեցնելու հետևանքով բացված Լճաշենի հնավայրի գտածոները նոր լույս սփռեցին Սևանի ավազանի բրոնզեդարին: 1994-2009թթ. Սևանի ավազանում ուսումնասիրություններ է կատարել հայ-իտալական հնագիտական արշավախումբը, ուսումնասիրությունները, սակայն, չէին վերաբերում ստորջրյա հատվածին:

2010թ.-ին լույս տեսած «Ծովի մշակույթը՝ մարդկության մշակույթն է քաղաքակրթությունների երկխոսությունում» խորագրով՝ «Այաս» ծովային հետազոտությունների ակումբի 25-ամյակին նվիրված միջազգային գիտաժողովի նյութերը բազմակողմանի ուսումնասիրություններ են պարունակում ծովային՝ նյութական ու ոչ նյութական մշակութային ժառանգության վերաբերյալ [14]:

Ծովային հետազոտությունների «Այաս» ակումբի սուզորդների հետ վերջին տարիներին լճի հատակին կատարել ենք մի շարք ակնադիտական հետազոտություններ ու նկարահանումներ:



Նկ. 2. Պատի շարվածք լճի՝ Արդանիշից-Շորջա հատվածում:

Սևանա լճի հատակում՝ Արտանիշի հրվանդանից դեպի արևմուտք՝ 7-15 մետր խորությամբ՝ մոտ 500 մ² տարածքում, հայտնաբերվել է մի ուշագրավ տեղամաս, ինչը հնագույն բնակատեղի էր հիշեցնում (Նկ. 2, 3, 4):



Նկ. 3. Նույն հատվածում խոյի գլուխ հիշեցնող քանդակ:



Նկ. 4. Նույն հատվածում սեպաձև երկայնակի կտրվածքներով քանդակ:

Տարածքը մասնագիտական ուսումնասիրման կարիք ունի: (Որպեսզի նկարները տեղ չզբաղեցնեն, տեղադրում ենք տեսագրված նյութի հղումը) [23]:

Հնագետները գտնում են, որ շատ անելիք կա նաև Հայաստանի Հանրապետության՝ մեծությամբ երկրորդ ջրային տարածքի՝ Ախուրյանի

ջրամբարի հատակին [17]: Ջրամբարի կառուցումից հետո մի շարք հնագիտական հուշարձաններ մնացել են ջրի տակ: Այս հուշարձաններից նշենք անտիկ Շիրակավանը, Ջրափին, Երազգավորսը [18]:

Հայաստանի լճերում վերջին տարիներին ստորջրյա հետազոտություններ են կատարում երկրաբաններն ու բուսաբանները: «Հայ-ֆրանսիական սուզորդական միությունն ավելի քան 10 տարի Սևանի հատակում ուսումնասիրում է խզվածքները, միլիոնավոր տարիների գոյացությունները՝ միկրոբիոլիտները, ինչը ֆրանսահայ գիտնականներն անվանել են «Սևանիտ», ինչպես նաև լճի հատակից դուրս եկող գազի և ջրի աղբյուրների բաղադրությունը: Ա. Թախտաջյանի անվան բուսաբանության ինստիտուտի գիտաշխատողները Սանկտ Պետերբուրգի գործընկերների և ԱԻՆ ճգնաժամային կառավարման ակադեմիայի սուզորդների հետ համատեղ ուսումնասիրել են Հայաստանի բարձրլեռնային լճերն ու ստորջրյա բույսերը [15,16]:

Նավաբեկությունների ուսումնասիրություն: Ստորջրյա հնագիտության կամ ծովային հնագիտության ինտենսիվ զարգացող ուղղություն է նավաբեկությունների ուսումնասիրությունը:

Միջնադարում հայ ծովագնացների, վաճառականների և ուխտավորների մասին, ինչպես նաև ծովահենների ու խորտակված հայապատկան նավերի մասին հսկայական չուսումնասիրված փաստաթղթային ժառանգություն կա Մատենադարանում և աշխարհի դիվաններում:

Համաշխարհային ծովային առևտրում հայերի դերի, հայապատկան առևտրական նավերի պատմական գրանցամատյանի ու նավերի ցանկի մասին կարևոր ուսումնասիրություններ է կատարել Յուրի Բարսեղովը [13]:

Միջնադարում հայ վաճառականների ու ծովագնացների մասին տեղեկություններ են ուսումնասիրել «Կիլիկիա» նավի նավապետ Կարեն Բալայանը, Հայ մատենագրության թվանշային գրադարանի տնօրեն Մերուժան Կարապետյանը, Լոս Անջելեսի Կալիֆորնիայի համալսարանի հայագիտական ամբիոնի վարիչ Սեպուհ Ասլանյանը [7]:

Կ. Բալայանի ուսումնասիրությունների արդյունքում տեղեկություններ են հավաքվել Խաղաղ և Հնդկական օվկիանոսներում ու ծովերում սուզված 21 հայկական և հայապատկան նավերի մասին, որոնք խորտակվել են XVII-XVIII դդ. ծովահենների և փոթորիկների պատճառով: Դրանցից մեկը «Քեդախ մերչանտ»ն է կամ Հայկական սովետական հանրագիտարանում նշված «Կվեդա Մերչանտ» հայկական

նավը, ինչը 1688թ. զավթել էր Հնդկական օվկիանոսում հայտնի ծովահեն կապիտան Ուիլիամ Քիդը [12]: 2007թ. Կարիբյան ծովում նավի մնացորդներն արդեն իսկ հայտնաբերվել են և ինքությունն ապացուցվել:

Հայապատկան մեկ այլ նավի՝ Մանթա Քաթարինայի մասին հիշատակում է Ս. Ասլանյանը [7]:

Ծովահենության դեմ հայերի ակտիվ պայքարի մասին են վկայում բրիտանական թանգարանում պահպանվող 300-ից ավելի ձեռագիր նամակները՝ կազմված Նոր Ջուդայում, Սուրաթում, Բասրայում, Կարակասում, Կալկաթայում և այլուր:

Ծովահենների գործողություններից մեծապես վնաս կրած հայ վաճառականների նավերից շատերն այժմ ծովերի ու օվկիանոսների հատակին են, նրանց մնացորդները պատմական հուշարձաններ են, որոնք հայտնաբերելու և ինքությունը հաստատելու համար լուրջ հետազոտություն, համապատասխան մասնագիտական պատրաստվածություն և համագործակցային եզրեր են պետք:

Համաշխարհային օվկիանոսի ջրասույզ հուշարձանները, հնավայրերը, նավերն ու գտածոները ՅՈՒՆԵՍԿՕ-ն սահմանել է որպես ստորջրյա մշակութային ժառանգություն և 2011թ. հռչակել դաշնագիր՝ այդ ժառանգության պահպանման և դրա հետ վարվելու կանոնների վերաբերյալ [19]:

ՅՈՒՆԵՍԿՕ-ն նաև առանձին ձեռնարկով ներկայացրել է շխարհի այն բուհերի ցանկը, որոք նվաճումներ են գրանցել ստորջրյա հնագիտության ոլորտում [20]:

Արևմուտքում, հյուսիսում և Եվրոպայում ստորջրյա հնագիտություն ուսումնասիրում են ժամանակակից լաբորատորիաներով հագեցած հզոր ինստիտուտներ: Որոշ ինստիտուտների կազմում գործում են նաև ջրասուզական գործի և խորջրյա տեխնիկայի զարգացման բաժիններ, օրինակ՝ Woods Hole Oceanographic Institution, Центр подводных исследований РГО, Oxford Centre for Maritime Archaeology, Deep Ocean Education Project (ինչի կազմում գտնվող Schmidt Ocean Institut-ի կողմից կատարվող խորջրյա հետազոտություններին կարող ենք հետևել առցանց ուղիղ միացմամբ) [21]:

Հայաստանում ստորջրյա հնագիտության զարգացման խնդիրներից առանձնացրել ենք՝

1. հայկական ջրասույզ հուշարձանների համակարգված ցանկի ստեղծումը,

2. հայկական, հայապատկան և հայանուն նավերի պատմության ուսումնասիրությունը,

3. հայկական ջրասույզ ժառանգության քարտեզագրումը,

4. պատմաբան, հնագետ սուզորդների պատրաստումը,

5. բուհերում ստորջրյա հնագիտության ճյուղի ձևավորման և զարգացման նախադրյալների ստեղծումը:

Եզրահանգում: Կարևորելով հայկական ջրասույզ ժառանգության համակարգումը, բացահայտումն ու ուսումնասիրությունը, ինչպես նաև ուսումնասիրելով ստորջրյա հնագիտությամբ ու ծովային հետազոտություններով զբաղվող գիտակրթական կենտրոնների ու կազմակերպությունների առաջավոր փորձը՝ գնտնում ենք, որ Հայաստանում առկա են ստորջրյա հնագիտության զարգացման բոլոր նախադրյալները: Ժամանակն է Հայաստանում զարգացնել ստորջրյա հնագիտությունը:

НЕОБХОДИМОСТЬ И ПРОБЛЕМЫ РАЗВИТИЯ ПОДВОДНОЙ АРХЕОЛОГИИ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ

Мартикян А. В.

Учитывая наличие и необходимость изучения утопленных армянских памятников в озерах Армянского нагорья (озера Севан, Ван), а также упоминания об армянских кораблях в морях и океанах, и современные открытия, представляем необходимость развития в Армении бурно развивающуюся в мире отрасль науки – подводную археологию и предлагаем обсудить проблемы развития этой отрасли.

Ключевые слова: подводная археология, мореплавание, морская археология, озеро Севан, озеро Ван, дайвинг.

THE NECESSITY FOR UNDERWATER ARCHAEOLOGY DEVELOPMENT AND RELATED PROBLEMS IN THE REPUBLIC OF ARMENIA

Martikyan A. V.

Taking into account the existence and the necessity for studying submerged Armenian monuments in the lakes of the Armenian Highlands (Lake Sevan, Lake Van), as well as written records of Armenian-owned ships in the seas and oceans and recent discoveries, we find necessity to develop

underwater archaeology in the Republic of Armenia and suggest touching upon issues related to it.

Keywords: Underwater Archaeology, sailing, nautical archaeology, Lake Sevan, Lake Van, diving.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Արիստակիսի Լաստիվերսոյոյ Պատմութիւն, աշխատասիրութեամբ Կ. Ն. Յուզաշյանի: Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ.: 1963: 158 էջ:
2. Թովմա Արծրունի և Անանուն Պատմություն Արծրունյաց տան: Երևան, «Սովետական գրող» հրատ.: 1978: 406 էջ:
3. Մանուէլ Գիւմուշխանցի Պատմութիւն անցից անցելոց Սեւանայ վանուց: Վաղարշապատ, «Մայր Աթոռ Ս. Էջմիածին» հրատ.: [1871](#): 115 էջ:
4. Մովսէս Խորենացի Աշխարհացոյց յաւելուածովք նախնեաց: Մատենագիր Հայոց: Հ.Բ: Անթիլիաս: 2003: 215 էջ:
5. Մովսէս Կաղանկատուացի Պատմութիւն Աղուանիցաշխարհի: Թիֆլիս, Ն. Աղանեանի հրատ.: 1912: 441 էջ:
6. Միքայէլյան Գ Սևանի ավազանի Կիկլոսյան ամրոցները: Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ. 1968: 116 էջ:
7. Ասլանեան Ս. Հայեր օվկիանոսներու միջև: Վիեննա, Միսիթարեան հրատակակչութիւն: 2019: 304 էջ:
8. Կարապետյան Ս. Հայաստանի պատմություն: Հայոց Ձոր: Երևան, «Բյուրակն» հրատ.: 2015: 232 էջ:
9. Կարապետյան Ս. Հայաստանի պատմություն: Արծկէ: Երևան, «Բյուրակն» հրատ.: 2018: 279 էջ:
10. Մեսրոպ Արք. Սմբատեանց Տեղեկագիր գեղարքունի ծովագարդ գաւառի, որ այժմ Նոր-Բայազիտ գաւառ: Վաղարշապատ, «Մայր Աթոռ Ս.Էջմիածին» հրատ.: 1895: 844 էջ:
11. Ոսկեան Հ. Վասպուրական-Վանի վանքերը: Վիեննա: Միսիթարեան տպարան: 1942: 742 էջ:
12. Համբարձումյան Վ. Ե. Հայկական սովետական հանրագիտարան: Հ. 5: Երևան, «Հայ սովետական հանրագիտարան» հրատարակչություն: 1979: 719 էջ:
13. Բարսեղով Յու. Հայերը և համաշխարհային ծովային առևտուրը: Երևան, «Բյուրքյան» հրատ.: 2018: 161 էջ:

14. Շովի մշակույթը մարդկության մշակույթն է քաղաքակրթությունների երկխոսությունում: «ԱՅԱՍ» ծովային հետազոտությունների 25-ամյակին նվիրված գիտաժողովի նյութեր: Երևան, «Սուղնի» հրատ.: 2011: 345 էջ:
15. Габриелян И. Г., Епремян Э. В., Акопян Е. А., Елмасамян А. С., Айрапетян Н. А., Саакян Т. Г., Брух А. А. "Ruppiaceae (Magnoliophyta, Liliopsida, ALISMATIDAE) Новое семейство для флоры Армении". Тахтаджания. 2019. N 5. С. 9-13.
16. Габриелян И. Г., Сапелко Т. В. Сравнение ископаемой и современной озерной растительности Армении. "Актуальные вопросы биогеографии". Материалы Международной конференции Санкт-Петербург, Россия. 9-12 октября, 2018 . С. 91-93.
17. http://shsu.am/media/journal/2020n1b/24.pdf?fbclid=IwAR3a3rc3JkDUxpIWQlu0iJQkZh05glcoL0GI0k9bGwdVHyMfjM7bG_sEiBI (20.09.2021)
18. <https://mkhitargosh.am/2019/2020.1.pdf?fbclid=IwAR1Y4iDWarFNfdwVfXl7qe6IDuyxbTm1CkN5Ve-0jXU5qqeUx3N5ESJgr6M> (20.09.2021)
19. <http://www.unesco.org/new/ru/culture/themes/underwater-cultural-heritage/2001-convention/> (20.09.2021)
20. https://fr.unesco.org/sites/default/files/universities_with_programs_in_underwater_archeology_sept.pdf (20.09.2021)
21. <https://deepoceaneducation.org/> (20.09.2021)
22. <https://www.youtube.com/watch?v=wwgajKgnQaU> (20.09.2021)
23. <https://www.youtube.com/watch?v=zst2QC7ymXQ> (20.09.2021)

Տեղեկություններ հեղինակի մասին

Մարտիկյան Ա. Վ.

Շիրակի պետական համալսարան

Էլ. փոստ՝ annamartikyan7@gmail.com

Տրվել է խմբագրություն՝ 28.09.2021

Գրախոսվել է՝ 16.02.2022